ԱՇՈՏ Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ,
պգ.դ., պրոֆեսոր, ԳԱԱ ակադեմիկոս

ՍՅՈՒՆԻՔԸ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ (ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

Բանալի բառեր՝ Սյունիք, պետականություն, սղնախներ, մելիքություններ, Ինքնավար Սյունիք, Լեռնահայաստան:

Հայ ժողովրդի հինգհազարամյա պետականության պատմության մեջ պատմական Հայաստանի յուրաքանչյուր տարածաշրջան իր ուրույն տեղն ու դերն է ունեցել: Որոշ պատմափուլերում՝ հատկապես համահայկական պետականության բացակայության շրջանում, Հայաստանի առանձին նահանգներ, անգամ գավառներ ու լեռնային համայնքներ իրենց վրա են վերցրել գոնե երկրի մեկ հատվածում մեր ժողովրդի ինքնիշխան ապրելու այնքան անհրաժեշտ գործառույթը: Ավելին, երբեմն այդ օրինակ պետական կազմավորումները՝ իբրև ինքնատիպ հենասյուներ, լուրջ նախադրյալներ են ստեղծել համահայկական պետականության վերականգնման ու ամրապնդման համար: Արևմտյան Հայաստանում այդպիսի կազմավորումներ կարելի է մատնանշել Մոկսում, Մուշ-Սասունում, Շատախում, Համշենում, Կիլիկիայի տարածաշրջանում՝ Զեյթունում, Մարաշում, Հաճնում և այլուր:

Արևելյան Հայաստանում հայոց պետականությունը շարունակաբար պահպանած երկրամասերի մեջ, անտարակույս, առանձնանում են Սյունիքն ու Արցախը[1]: Պատահական չէ, որ 11-րդ դարի կեսերին հայոց կենտրոնական թագավորության կործանումից հետո այս երկու նահանգն էլ ինչպես ուշ միջնադարում, այնպես էլ նոր ու նորագույն դարաշրջաններում, շնորհիվ զանազան թշնամիների դեմ տեղի հայության անդուլ ու հերոսական պայքարի, թեկուզև որոշակի տարածքի վրա ու ժամանակահատվածում, վերածվել են հայկական պետականության յուրահատուկ կղզյակների, հաստատել անկախ պետություն ունենալու հայ ժողովրդի անկոտրում կամքը:

Փորձենք հայոց պետականության ընդհանուր շղթայի մեջ կարևորել Սյունիքի դերը: Անկասկած, հատկապես միջնադարյան Հայաստանում երկրի ներքին ինքնիշխանության յուրահատուկ դրսևորում է եղել նախարարական (նաև՝ տանուտիրական) համակարգը, որը տեղերում ապահովել է հայ իշխանական դասի հարաբերական ինքնուրույնությունը կենտրոնական

[1] Հայոց պետականության պատմության մեջ Արցախի ունեցած դերի մասին տե՛ս **Մելքոնյան Ա.**, Արցախը հայոց պետականության պատմության հոլովույթում, Արցախը հայոց պետականության համար պայքարի քառուղիներում, միջազգային գիտաժողով, 2018 թ. փետրվարի 23: Զեկուցումների ժողովածու, Երևան, 2018, էջ 44–73:

իշխանությունից: Վերջինիս թուլացման կամ առավել ևս՝ բացակայության դեպքում տեղական ինքնիշխան մարմինները փոխարինել են կենտրոնական իշխանությանը՝ ինչ-որ իմաստով պահպանելով պետականության անընդհատականությունը: Այդպիսի խնդիրներ դարերի ընթացքում լուծել են Մեծ Հայքի թագավորության նախարարական համակարգում հատուկ կարգավիճակ ունեցած Սյունյաց նախարարները:

Մասնագետ-պատմաբանների կարծիքով Մեծ Հայքի իններորդ նահանգ Սյունիքն իր կարգավիճակով նախապես չի տարբերվել թագավորության մյուս աշխարհներից: Այն Ք.ա. 3–2-րդ հազարամյակներում մաս է կազմել Արատտա, Արմանում, Էթիունի պետական կազմավորումներին, ապա՝ Ք.ա. առաջին հազարամյակում եղել է Վանի (Արարատյան), Երվանդունյաց ու Արտաշեսյան թագավորությունների կազմում: Վաղ միջնադարում, պայմանավորված ավատատիրական հարաբերությունների արմատավորմամբ, հայ նախարարական դասի տնտեսական ու ռազմական ազդեցության ուժեղացմամբ, հայ Արշակունիները հարկ են համարել ի թիվս մի քանի նախարարական տոհմերի, հատուկ առանձնաշնորհումներով օժտել նաև Սյունիներին, որոնք Մովսես Խորենացու վկայությամբ դեռ առասպելական Վաղարշակ թագավորի օրոք աչքի էին ընկել արքունիքին հավատարմորեն ծառայելու շնորհով, որի համար ստացել էին պետության արևելյան նահանգների կուսակալի զորքերի հրամանատարի պաշտոնները:

Տրդատ Գ Արշակունին 314 թ. ոչ միայն հողեր շնորհեց Սյունի տոհմի առաջնորդ Անդովկ Ա-ին, այլև ճանաչեց իր թագավորության կազմում ինքնուրույն իշխանություն ունենալու նրա իրավունքը: Ըստ «Զորանամակի» Սյունիները ամենամեծ հեծյալ զորք՝ 19400 զինվոր ունեցող նախարարներն էին[2]: Նրանք արքունիքում արքայի ամենամոտ կանգնած պաշտոնյաներից էին: Պատահական չէ, որ նրանց տրված էր հատուկ արծաթե գահի վրանստելու (այստեղից էլ նրանց գահերեց իշխան կոչվելու պարագան), մարգարտյա վարսակալ, վարազագիր մատանի, ոսկյա մական, ազնվական ծագումը մատնանշող կարմիր գույնի կոշիկներ կրելու իրավունք և այլն: Իշխանության կենտրոնը նախապես Ծղուկ գավառի Շաղատ գյուղաքաղաքն էր, ապա՝ Սյունի (այժմ՝ Սիսիան) ավանը, ավելի ուշ՝ Կապան քաղաքը:

Սյունի նախարարները հաճախ պաշտոնական պատվիրակությունների կազմում մասնակցում էին արտասահմանյան ուղևորությունների: 303 թ. Գրիգոր Լուսավորչի ձեռնադրման նպատակով Կեսարիա մեկնած պատվիրակների մեջ էր Սյունիքի իշխանության հիմնադիր Անդովկ Սյունին: Վերջինիս որդին՝ Վաղինակ Ա-ն Խոսրով Կոտակի գահակալության տարիներ-

[2] Բաբկեն Հարությունյանի կարծիքով՝ այդ հեծյալների թվում հաշվված են նաև Սյունի իշխանների մարզպան եղած ժամանակ 15 հազար տանուտիրական զորքերը, իսկ զուտ Սյունիքի զորքը կազմել է 4400 հեծյալ: Ի դեպ, մյուս սահմանակալ նախարարների՝ Աղձնիքի և Գուգարքի բդեշխների հեծելազորը ևս բաղկացած է եղել գրեթե նույնքան հեծյալներից, համապատասխանաբար՝ 4000 և 4500 (Հայոց պատմություն, հ. II, գիրք առաջին, Երևան, 2018, էջ 402):

ին դարձել էր արքայի ամենավստահելի անձանցից մեկը: Նրա օգնությամբ հաջողվում է ճնշել Աղձնիքի Բակուր բդեշխի խռովությունը: Դավաճան բդեշխին պատժելուց հետո Հայոց արքան կազմակերպում է Վաղինակի ամուսնությունը Բակուրի դստեր հետ և այդ ճանապարհով Աղձնիքի բդեշխի պաշտոնը փոխանցում Սյունիներին, որոնք այն զբաղեցնում են ժառանգաբար՝ գրեթե մինչև Արշակունիների անկումը: Նշանակում է, որ Սյունիներին էր հանձնված Մեծ Հայքի ոչ միայն արևելյան, այլ նաև հարավարևմտյան սահմանների հսկողությունը:

Արշակունիների արքունիքում Սյունիներն իրենց դիրքերն ավելի են ամրապնդում Վաղինակի եղբոր՝ Անդովկ Բ-ի օրոք (339–385 թթ.), հատկապես այն բանից հետո, երբ Արշակ Բ-ն ամուսնանում է նրա դստեր՝ Փառանձեմի հետ: Ներսես Մեծ կաթողիկոսի կողմից Սյունիքին տրվում է նաև հոգևոր-եկեղեցական բարձր կարգավիճակ՝ մետրոպոլիտություն ունենալու իրավունք:

Սյունիքում հաջորդաբար իշխում են Անդովկ Բ-ի որդիները՝ Բաբիկն ու Վաղինակ Բ-ն: Վերջին իշխանը Բաբիկի որդին էր՝ Վասակ Սյունին (413–451 թթ.), որին Արշակունիների հարստության անկումից քիչ անց, վիճակվում է դառնալ Հայոց մարզպան, այսինքն՝ Հայաստանի գլխավոր պաշտոնյան, այն էլ բավական լայն լիազորություններով: Հանգամանորեն չանդրադառնալով Վասակի կերպարին և գնահատականներ չտալով նրա գործունեությանը, միայն նշենք, որ ժամանակի պատմիչների վկայությամբ նա 450–451 թթ. հակապարսկական ազատագրական պատերազմի սկզբնական փուլում գլխավորել է հայ ժողովրդի պայքարը, անգամ հորդորել սպարապետ Վարդան Մամիկոնյանին՝ չլքելու ապստամբների շարքերը, հանգամանքներ, որոնք հիմք են տվել մեծանուն պատմաբաններ Անտոն Գարագաշյանին, Նիկողայոս Ադոնցին, Հրանտ Արմենին և այլոց վերանայելու պատմաբանների մոտեցումները ավանդաբար նրան դավաճան ներկայացնելու հարցում[3]:

Արշակունիների անկմանը զուգընթաց նկատելիորեն թուլանում է նաև Սյունյաց իշխանությունը: Սակայն 6–7-րդ դարերի պարսկաբյուզանդական մրցակցության և 7–8-րդ դարերի արաբական արշավանքների ժամանակաշրջանում Սյունիքի հայությունը շարունակում է ակտիվ պայքարը օտար տիրապետության թոթափման ու երկրամասի ինքնիշխանության վերականգնման ուղղությամբ: 610 թ. Քրիստոսի խաչափայտը վերադարձնելու համար պարսից արքա Խոսրով Փարվեզի դեմ պայքարում բյուզանդական կայսր Հերակլեսին աջակցողների թվում աղբյուրներում հիշատակվում է Սյունյաց Բյուրեղ իշխանուհին: 821 թ. Սյունիքի վրա հարձակում գործած Ատրպատականի Խուրամյանների առաջնորդ Բաբեկի դեմ պայքարը գլխավորում է Վասակ Գ Սյունին (780–821 թթ.): Արաբների մոտծառայության անցած ազգությամբ թուրք զորավար Բուղայի զորքերը 852–853

[3] Տե՛ս **Վեմյան Խ.**, Վասակ Սյունիի պատմական գնահատության շուրջը, Հայկական ՍՍՌ ԳԱ տեղեկագիր, 1965, թիվ 1, էջ 41–68: **Адонц Н.**, Марзпан Васак перед судом историков, СПб., 1904:

թթ. կատաղի դիմադրության են հանդիպում ինչպես Սյունիքում, այնպես էլ Արցախում:

9-րդ դարից սկսվում է Սյունյաց իշխանական տան նոր վերելքը: Սյունիները Հայոց թագավորության վերականգնման համար պայքարը ղեկավարող Բագրատունիների կողքին էին: Նրանք մասնակցել են 875 թ. Գևորգ Գառնեցի կաթողիկոսի հրավիրած ժողովին, որի նպատակը Արաբական խալիֆայությունից Աշոտ Բագրատունի իշխանաց-իշխանի համար թագ ստանալն էր: Այդ ժամանակաշրջանում Սյունիների իշխանական տոհմը կարողանում է իր ազդեցությունը տարածել Վայոց ձորի և Գեղարքունիքի վրա, այդ գավառներում իշխանությունը հանձնել իրենց տոհմից սերված իշխաններին: Շուտով Սյունյաց իշխանները նահանգում ամրապնդում են նաև իրենց հոգևոր-եկեղեցական ինքնուրույնությունը. 906 թ. մեծ հանդիսավորությամբ օծվում է Տաթևի վանքը: Արարողությանը մասնակից են դառնում Վասպուրականի իշխան (908 թվականից՝ թագավոր) Գագիկ Արծրունին, Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին, Աղվանքի կաթողիկոս Սիմեոնը, Արցախի իշխան Եսային, Գարդմանի տեր Սահակ Սևադան և ուրիշներ:

Նորաստեղծ Բագրատունյաց թագավորությանը վիճակված չէր պահպանել երկրի միասնականությունը: 10-րդ դարի սկզբին Սյունիքի և Վասպուրականի իշխանական տների միջև Նախճավանի պատկանելության շուրջ վեճ է ծագում: Սմբատ Ա Բագրատունին (890–914 թթ.), չկամենալով Սյունիներին տրամադրել իր դեմ, խնդիրը լուծում է նրանց օգտին՝ հույս ունենալով, որ իր քրոջ որդին՝ Վասպուրականի իշխան Գագիկ Արծրունին ըմբռնումով կմոտենա իր այդ քայլին: Սակայն Գագիկը, հավատալով՝ Հայոց թագը ստանալու վերաբերյալ Ատրպատականի Սաջյան ամիրա Յուսուֆի խոստումներին, Վասպուրականը հռչակում է ինքնուրույն թագավորություն: Ամբողջ 10-րդ դարի ընթացքում շարունակվում է Բագրատունյաց թագավորության մասնատման գործընթացը. հռչակվում են Կարսի (963 թ.) և Տաշիր-Զորագետի (978 թ.) թագավորությունները: Ցավոք, շուտով, թեպետև ամենավերջինը, պառակտման ուղին է բռնում նաև Սյունիքը:

987 թ. Սյունիքի գահերեց իշխան Սմբատն իր երկրամասը հռչակում է ինքնուրույն թագավորություն[4]: Սյունյաց տոհմի տարեգիր Ստեփանոս Օրբելյանն այդ քայլն արդարացնում է հետևյալ պատճառաբանությամբ: Այդ ինչու Բագրատունիներից սերվածները կարող են լինել թագավոր, իսկ մենք, որ նույնպես սերում ենք Հայկ նահապետից՝ ոչ: «Արդ առաջին թագաւորեաց ի Սիսական աշխարհս արին և քաջն,-գրում է պատմիչը,- հզօր և բարեպաշտ արքայն Սմբատ՝ որդի Սահակայ ...»[5]: Սմբատ թագավորը մահանում է 998 թ. և ամփոփվում Տաթևի վանքում: Նրան փոխարինում է որդին՝

---

[4] Սյունյաց (նաև՝ Կապանի, Բաղաց) թագավորության ընդարձակ սահմանների մասին տե՛ս **Հակոբյան Թ.**, Սյունիքի թագավորությունը պատմա-աշխարհագրական առումով, Երևան, 1968, էջ 57–72: Սյունիքի թագավորության պատմությունը մանրամասն տե՛ս **Григорян Г.,** Очерки истории Сюника IX–XV вв., Ереван, 1990:

[5] **Ստեփանոս Օրբելեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Փարիզ, 1959, էջ 317:

Վասակ Ա-ն (998–1040 թթ.), որի դուստրը՝ Կատրանիդեն ամուսնանում է Բագրատունյաց ամենանշանավոր արքայի՝ Գագիկ Ա-ի հետ: Կատրանիդեն իր մոր՝ Շահանդուխտի և սկեսուրի՝ Խոսրովանույշի օրինակով զբաղվում է եկեղեցաշինությամբ: 1001 թ. Անիում ավարտվում է նրա նախաձեռնությամբ սկսված Կաթողիկե մայր տաճարի շինարարությունը:

Գագիկ Ա Բագրատունին, ընդառաջ գնալով իր խնամի Վասակ Սյունու և կնոջ՝ Կատրանիդեի խնդրանքներին, վերականգնում է Սյունիքի մետրոպոլիտությունը, որը վերացվել էր Անանիա Մոկացի կաթողիկոսի կողմից 960-ական թվականներին: Մետրոպոլիտության հոգևոր իշխանությունը տարածվում էր նաև Նախճավանի, Զուղայի, Երնջակի, Ճահուկի և այլ գավառների վրա: Այն ուներ առանձին միաբանություն, որոշ տվյալներով՝ շուրջ հազար միաբաններով: Հայտնի է, որ թագավորության տարածքում հաշվվող շուրջ հազար գյուղերի մի մասը պատկանում էր Տաթևի վանքին: Եկեղեցական-մշակութային խոշոր կենտրոնի էր վերածվել Վահանավանքը[6]:

Ուշագրավ է, որ վերջին Սյունի թագավորները, չունենալով արու զավակներ, հետզհետե իրենց գահը փոխանցում են Արցախի իշխաններին, որոնց հետ ունեին սերտ ազգակցական կապեր: Գանձակի ամիրայության կողմից 1170 թ. Սյունիքի վերջին դիմադրական ամրոցի՝ Բաղաբերդի գրավումից հետո Մայր հայրենիքում կործանվում է հայկական վերջին թագավորությունը: Վերջին գահակալը Հասան Խաչենցին էր (1166–1170 թթ.):

Թագավորության անկումով Սյունիքում չի վերանում պետականությունը: Ներքին ինքնիշխանության որոշակի կարգավիճակով 13-րդ դարի առաջին տասնամյակներից երկրամասը շարունակում են կառավարել Զաքարյաններին ենթակա Օրբելյան և Պռոշյան իշխանական տների ներկայացուցիչները:

16-րդ դարից սկսած Արցախում, Սյունիքում և Արևելյան Հայաստանի լեռնային մի շարք այլ շրջաններում ստեղծվում են հայ զինականների պաշտպանական ճամբարներ՝ սղնախներ: Վերջիններիս հիմքի վրա հայ իշխանական տների շառավիղները ձևավորում են հայկական կիսանկախ պետական նոր կազմավորումներ՝ մելիքություններ: Հիշենք, որ *մելիք* բառը արաբական ծագում ունի, որ նշանակում է թագավոր: Սյունիքի մելիքությունները կարևոր դերակատարություն են ունենում 16–18-րդ դարերի հայ ազատագրական պայքարի ծավալման գործում: 17-րդ դարի վերջին և 18-րդ դարի սկզբին այդ պայքարի առաջամարտիկներից է դառնում տեղի մելիքական տոհմերից սերած ազգային գործիչ Իսրայել Օրին: 1722–1730 թթ. Սյունիքում ազատագրական պայքարի գլուխկանգնում են Վրաստանից ժամանած Դավիթ Բեկն ու Մխիթար սպարապետը: Վրաց Վախթանգ Զ թագավորը

---

[6] Վահանավանքի մասին տե՛ս **Գրիգորյան Գ.Մ.,** Վահանավանք (պատմահնագիտական ուսումնասիրություն), Երևան, 2007:

«եւ ետ զԴաւութ Պէկն, որ ի յազգէն Հայոց, երկու հազար արեամբ, եւ զիշխանութիւն ետնմազզօրս գումարել եւ պահել զերկիրն Ղափանցւոց»[7]:

Դավիթ բեկի քաջերը կարողանում են Սյունյաց լեռնաշխարհը մաքրել քոչվոր նվաճողներից, ազատագրել տեղի մի շարք նշանավոր ամրոցներ ու բնակավայրեր (Շինուհայր, Զեյվա, Լնազ, Որոտան, Մեղրի): Կարևորելով Դավիթ Բեկի զինուժի դերը ախոյան թուրքերի դեմ պայքարում՝ 1724 թ. Պարսից շահ Թահմասպ Բ-ն պաշտոնապես ճանաչում է Սյունիքի իշխանության անկախությունը: Շուտով հայկական իշխանության դեմ պայքար է սկսում Օսմանյան կայսրությունը[8]: Հալիձորը դառնում է սյունեցիների դիմադրական մարտերի կենտրոնը:

1728 թ. Դավիթ Բեկի մահվանից հետո սյունեցիների պայքարի գլուխ կանգնում է Մխիթար սպարապետը: 1730 թ. Օրդուբադ կատարած հաղթական արշավանքից Խնձորեսկ վերադառնալիս նա դավադրաբար սպանվում է: Այդ մասին պատմիչը գրում է. «իւրոց զօրացն հարեալ թոփով սպանին, եւ վաղվաղակի Հայոցն հատեալ զգլուխն որա՝ տարին առ փաշայն Թավրիզու. եւ նա ըստ արժանեացն հատոյց նոցա, հատանելով զգլուխ անզգամացն, եւ ասէ Զի արդ իշխեցիք զայդպիսի քաջ այր սպանանել ի զուր տարապարտուց»[9]:

Դավիթ Բեկի և Մխիթար Սպարապետի գլխավորած հերոսական կռիվներն անհետևանք չեն մնում: 1918 թ. Անդրանիկ Օզանյանը, 1919 թ.՝ Արսեն Շահմազյանն ու Գարեգին Նժդեհը նրանց պայքարը շարունակում են թուրք-թաթարների ու բոլշևիկների դեմ՝ կարողանալով Սյունիքը պահել անվնաս: 1920 թ. դեկտեմբերի 25-ին, երբ Երևանում խորհրդային կարգեր հաստատած համայնավարները մայրաքաղաքում զբաղված էին կոմունիստական շաբաթօրյակ կազմակերպելով, Նժդեհի գլխավորությամբ Տաթևի վանքում հրավիրված համազանգեզուրյան առաջին համագումարը երկրամասը հռչակում է «Ինքնավար Սյունիք», որը համազանգեզուրյան երկրորդ համագումարում՝ 1921 թ. ապրիլի 27-ին՝ վերանվանվում է «Լեռնահայաստան»[10]: Նույն թվականի հունիսի 1-ին Լեռնահայաստանը պաշտոնապես իրեն հայտարարում է «Հայաստանի Հանրապետություն», որին վիճակվում է մինչև հուլիսի կեսերը տարածաշրջանում լինելու վերջին ոչ խորհրդային, անկախ պետական կազմավորումը: Շնորհիվ Զանգեզուրի հերոսամարտի երկրամասը փրկվում է Ադրբեջանին բռնակցվելու թուրք-թաթարական հեռանկարից և մնում Խորհրդային Հայաստանի կազմում:

Կասկածից վեր է, որ նշելով Լեռնահայաստանի հռչակման 100-ամյա փառապանծ հոբելյանը, ստեղծված ներկա աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում մենք լիովին գիտակցում ենք պատմությունից ճիշտ դասեր քաղե-

---

[7] Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց», Վենետիկ-Ս.Ղազար, 1978, էջ 121:

[8] Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Երևան, 2010, էջ 46–48:

[9] Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց», էջ 142:

[10] «Ինքնավար Սյունիքի» և «Լեռնահայաստանի» մասին մանրամասն տե՛ս **Սիմոնյան Ա.,** Զանգեզուրի գոյամարտը 1920–1921 թթ., Երևան, 2000, նույնի՝ Զանգեզուրի հերոսամարտը 1917–1920 թթ., Երևան, 2009:

լ ու հրամայականը և մեր անկախ պետականության պահպանման համար Ար-ցախն և Սյունիք աշխարհների կենսական անհրաժեշտությունը:

Ашот А. Мелконян, *Институт истории НАН РА, д.и.н., профессор, академик НАН РА,* **Сюник в контексте армянской государственности (исторический очерк).**

Каждый регион исторической Армении имеет свое уникальное место и роль в истории пятитысячелетней государственности армянского народа. На некоторых исторических этапах, особенно в условиях отсутствия общеармянской государственности, отдельным образованиям, горным общинам приходилось брать на себя важную функцию сохранения государственности на отдельных частях Армянского нагорья. Несомненно, Сюник и Арцах выделялись среди территорий, неизменно сохранявших армянскую государственность в Восточной Армении. Неслучайно, что после распада центрально-армянского царства в середине XI века эти два региона, как в позднем средневековье, так и в новое время оставались островками армянской государственности.

С XVI века оборонительные лагеря армянских военных формирований – сигнахи, были созданы в Арцахе, Сюнике и ряде других горных районов Восточной Армении. На основе сигнахов армянские княжеские дома сформировали новые армянские полунезависимые государственные образования - меликства. В конце 17 века и в начале 18 века Исраэль Ори, национальный деятель из местной знати, становится одним из лидеров этой борьбы. В 1722–1730 гг. Давид Бек и Мхитар Спарапет возглавляют освободительную борьбу в Сюнике. Иранский царь Тахмасп II в 1724 г. с целью привлечения армянских военных сил в борьбу против Османской империи официально признает Сюникское княжество Давида Бека.

В 1918 г. Андраник Озанян, в 1919 г. Арсен Шахмазян и Гарегин Нжде в Сюнике продолжают борьбу против турок-татар и большевиков. Более того, после советизации большей части Восточной Армении 25 декабря 1920 года в Татевском монастыре на первом общезангезурском сьезде во главе с Г. Нжде, провозглашается независимость «Автономного Сюника» («Ինքնավար Սյունիք»). 27 апреля 1921 г. это последнее антисоветское государственное образование Закавказья переименовывается в «Горную Армению» («Լեռնահայաստան») и продолжает свое существование до середины июля того же года. Благодаря сюникской освободительной борьбе армянскому народу удается провалить пантюркистский план захвата Сюника Азербайджаном и столь важный стратегический регион оставить в составе Армении.

Ashot A. Melkonyan, *Institute of History of the NAS RA, Doctor of Sciences in History, Professor, Academician of the NAS RA,* **Syunik in the context of the Armenian statehood (historical overview).**

Each region of historical Armenia has its own unique place and played its main role in the history of the five thousand-year-old statehood of the Armenian people. At some historical stages, particularly in the absence of the pan-Armenian statehood, individual entities, mountain communities had to take on an important function of preserving statehood in certain parts of the Armenian Highland. Undoubtedly, Syunik and Artsakh stood out among the territories that

invariably retained Armenian statehood in Eastern Armenia. It is no coincidence that after the collapse of the Central Armenian Kingdom in the mid 11th century, these two regions, both in the Late Middle Ages and in New Times, remained “islands” of the Armenian statehood.

Since the 16th century, defensive camps of Armenian military formations called *“the sghnakhs”* were created in Artsakh, Syunik and in few other mountainous regions of Eastern Armenia. On the basis of the sghnakhs, the Armenian princely houses formed new Armenian semi-independent state entities – the *Melikdoms*. At the end of the 17th – beginning of the 18th century, Israel Ori, a national figure from the local nobility, became one of the leaders of this struggle. In 1722–1730 David Bek and Mkhitar Sparapet lead the liberation struggle in Syunik. In 1724, in order to attract Armenian military forces in the struggle against the Ottoman Empire the Persian ruler Tahmasp II officially recognizes the Syunik principality of David Bek. In 1918 Andranik Ozanyan, and then in 1919 Arsen Shahmazyan and Garegin Nzhdeh in Syunik continue the struggle against the Tatar Turks and the Bolsheviks. Moreover, after the Sovietization of most of Eastern Armenia on December 25, 1920, the independence of the “Autonomous Syunik” was proclaimed in Tatev Monastery on the first all-Zangezur congress headed by Garegin Nzhdeh. On April 27, 1921, this last anti-Soviet state entity of Transcaucasia was renamed “Mountainous Armenia” and continued to exist until mid July of the same year. Thanks to the Syunik liberation struggle, the Armenian people manage to fail the pan-Turkist plan to capture Syunik by Azerbaijan and leave such an important strategic region as part of Armenia.

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի (ՊԻ) տնօրեն,
ԳԱԱ ակադեմիկոս
ashamelk@yahoo.com

ԱՐՑԱԽԸ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հիմնաբառեր՝ թագավորություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ազգային-ազատագրական շարժում, հայ բնակչություն, պետականություն, Արցախ, Արևելյան Հայաստան:

Հայկական լեռնաշխարհում համահայկական պետականության բացակայությունը դեռ չի նշանակել առհասարակ պետականության վերացում: Գոյություն ունենալով պատմական Հայաստանի միհատվածում, որպես կանոն՝ պատմաաշխարհագրական նպաստավոր պայմաններ ունեցող տարածաշրջաններում այն ունեցել է պետականության տարբեր դրսևորումներ (իշխանապետություն, կիսանկախ համայնք և այլն) և ժամանակի ընթացքում վերածվել է համահայկական պետություն, որն էլ ուսումնասիրողներին հիմք է տվել այդուհետ այն համարել լիարժեք պետականություն: Հատկանշական է, որ տեղայնական նշանակության շատ պետական կազմավորումներ հաճախ հիմք են հանդիսացել համահայկական պետականությունների ձևավորման համար:

428 թ. Արշակունիների անկումով միայն վերանում է թագավորությունը, իսկ պետականությունը ձեռք է բերում նոր դրսևորումներ՝ Արևելյան Հայաստանում՝ մարզպանության, իսկ Արևմտյան Հայաստանում՝ սատրապությունների տեսքով, որոնց հիմքում ընկած էր նախարարական համակարգը: Այդ խնդրի խորագիտակ Նիկողայոս Ադոնցն ընդգծում էր, որ «Նախարարական վարչակարգը իր կայունությամբ այնպիսի տիպական ուշագրավ երևույթ է, որ առանց դրա անհնարին է հայոց հին կյանքի և պատմության գիտական ընբռնումն ու ճիշտ ուսումնասիրությունը: ... Այդ երկարատև ժամանակաշրջանում նախարարությունը հանդիսացավ քաղաքական կարևոր գործոն և, կարելի է ասել, հայոց պատմության լծակը. նախարարությունները ամբողջ երկրով ցրված քաղաքական ազատության օջախներ էին ..., նրա ժամանակ երկրի արտաքին կախվածությունը համատեղված էր ներքին ինքնուրույնության հետ, և այդ ճանապարհով ապահովվում էր երկրի ինքնատիպությունը»[11]:

Արևելյան Հայաստանում Արշակունիներից հետո իշխանությունը թագավորից անցնում է նախարարական դասին. երկիրը դառնում է հարկատու Սասանյաններին, սակայն զինական ուժը մնում է նախարարների իրավասության ներքո: Այդ մասին պատմիչ Եղիշեն գրում է, որ երբ պարսից արքունիքը «...իբրև զնա (Արտաշես արքային -Ա.Մ.) ևս մերժեաց ի թագաւորութենէն, ի

[11] Ադոնց Նիկողայոս, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 241:

նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտև գանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի»[12]:

Այսպես՝ թագավորին փոխարինած մարզպանը ստանձնում է նրա մի շարք գործառույթներ, պահպանվում են Արշակունիների օրոք առկա գրեթե բոլոր գործակալությունները՝ հազարապետությունը, սպարապետությունը, մեծ դատավարությունը և այլն: Հատկապես ուշագրավ է մաղխազության գործակալության, այն է՝ թագավորի թիկնազորի պետի պաշտոնի պահպանումը, այն դեպքում, երբ թագավոր այլևս չկար: Ի դեպ, ոչ միայն պաշտոններն էին պահպանվել, այլև շատ դեպքերում՝ նաև դրանք իրենց նախկին տերերին՝ նախարարական հայտնի տներին՝ Մամիկոնյաններին, Ամատունիներին, Խորխոռունիներին հանձնելու ավանդույթը:

Վահանանց պատերազմից հետո Արևելյան Հայաստանում Պարսկաստանը ճանաչեց հայերի ինքնավար ապրելու իրավունքը և առժամանակ դադարեցրեց կրոնական հալածանքները: Վարդանանց ու Վահանանց պատերազմների ընթացքում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի շնորհիվ, Նվարսակի հաշտության կնքումով 480-ական թվականների կեսերից Հայոց պետականությունն ինքնավար տարբերակով վերականգնվեց ինչպես Արևելյան Հայաստանի կենտրոնական հատվածում՝ Արարատյան երկրում, այնպես էլ Հայոց Արևելից կողմերում՝ Արցախում Վաչագան Բարեպաշտի գլխավորությամբ[13]:

Հետագա դարերում Արցախում Առանշահիկները շարունակեցին պետականության պահպանման ավանդույթները Հասան-Ջալալյանների և տոհմիկ ազնվականական այլ տների կողմից: Այսպիսով, V դարի վերջից Արցախը դարձավ տեղայնական մակարդակով հայոց պետականության պահպանման կենտրոններից մեկը: Լեռներով մյուս նահանգներից կտրվածությունը հնարավորություն տվեց Արցախին դարեր շարունակ մնալ հայոց պետականության կրողներից մեկը: Արցախի տեղն ու դերը հայոց պետականության համակարգում ավելի ընդգծվեց ուշ միջնադարում:

«Ուշ-միջնադարյան Հայաստանում,- գրում է Բ. Ուլուբաբյանը,- թաթար-մոնղոլական զավթիչների, ապա նրանց հետքերով եկած ակ-կոյունլու և կարա-կոյունլու թուրքերի կործանարար

---

[12] Եղիշէի վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Եր., 1957, էջ 6:

[13] Հայոց պետականության պատմության մեջ Արցախի ունեցած դերակատարության մասին մանրամասն տե՛ս Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, V-VI դդ., Եր., 1981, նույնի՝ Արցախի պատմությունն. սկզբից մինչև մեր օրերը, Եր., 1994: Սույն հոդվածի ընդարձակ տարբերակը տե՛ս Մելքոնյան Ա., Արցախը Հայոց պետականության պատմության հոլովույթում, «Հայոց պետականության համար պայքարի քառուղիներում», միջազգային գիտաժողով, 23 փետրվարի 2018, զեկուցումների ժողովածու, Երևան, 2018, էջ 44-73:

հարվածների տակ, ոչնչացել էին հայկական իշխանությունները, և Խաչենը համարյա միակ վայրն էր, ուր պահպանվում էին հայ պետականության բեկորները, և ուր դեռևս բորբոքք էին մնում հայոց քաղաքական ազատության կայծերը...»[14]: Արցախում, հարակից գավառներում և Հյուսիսարևելյան Հայաստանի այլ շրջաններում պահպանված իշխանական տների (Հասան-Ջալալյաններ, Դոփյաններ, Օրբելյաններ, Մելիք-Շահնազարյաններ և այլք) շառավիղները, ըստ մեծանուն վիպասան Ռաֆֆու երբեք չկորցրեցին «իրենց ինքնավարության իրավունքները» և ձևավորեցին հայ մելիքական դասը[15]:

Նոր ժամանակներում (XVII դարի կես – 1918 թ.) հայոց պետականության պատմությունն ունի իր առանձնահատկությունները: Առաջին շրջափուլում (XVII դարի կես XVIII դարի սկիզբ), որը կարելի է անվանել պետականության տեղական (տեղայնական) շառավիղների ժամանակաշրջան, բացակայում է համահայկական պետականությունը, բայց այն առկայծումներով ու զանազան դրսևորումներով՝ ինքնիշխան կազմավորումների (սղնախներ՝ պաշտպանական ամրոցներ, մելիքություններ, իշխանապետություններ, ինքնավար համայնքներ) տեսքով երևան է գալիս Հայաստանի առանձին շրջաններում՝ Արցախում, Սյունիքում, Գեղարքունիքում, Մոկսում, Շատախում, Սասունում[16], Կիլիկիայի լեռնային հատվածներում:

Այդուհետ շարունակվում են ազգային-ազատագրական պայքարի ընդհանուր շղթայում պետականության վերականգնման համար գործնական քայլերը Սյունիքում և Արցախում: Դրանով սկսվում է **պետականության վերականգնման գործնական քայլերի փուլը** (1722-1747 թթ.): Սյունիքում Դավիթ բեկի գլխավորած ազատագրական պայքարը պսակվում է հաջողությամբ. 1724 թ. Իրանի Թահմասպ II շահը ճանաչում է Սյունիքի հայկական իշխանությունը՝ հաշվի նստելով հայերի ազատագրական ձգտումների հետ և նպատակ ունենալով Դավիթ բեկի իշխանապետությունը օգտագործել ընդհանուր թշնամու՝ Օսմանյան կայսրության դեմ:

---

[14] Ուլուբաբյան Բ.Ա., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Եր., 1975, էջ 6:

[15] Հայ մելիքների ինքնավար կարգավիճակի, զինուժի, դատական իշխանության և այլ գործառույթների և առհասարակ՝ նրանց ստեղծած պետականության դրսևորում հանդիսացող մելիքությունների մասին մանրամասն տե՛ս Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ.10, Եր., 1959, 396-510, Ուլուբաբյան, նշվ. աշխ., Մաղալյան Արտակ, Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Եր., 2007 և այլն:

[16] Արևմտյան Հայաստանում ձևավորված հայկական կիսանկախ իշխանությունների մասին տե՛ս Բաղալյան Գ., Հայկական կիսանկախ իշխանություններն ու մելիքություններն Արևմտյան Հայաստանում և Լեռնային Կիլիկիայում, ՎԷմ, Եր., 2011, թիվ 137-155:

Հայ-իրանական համագործակցության արդյունքում 1730-ական թվականներին Նադիր խանի (շահ) ջանքերով ամրապնդվում են հայկական մելիքությունները ոչ միայն Արևելյան Հայաստանի լեռնային շրջաններում (Սյունիք, Արցախ, Գեղարքունիք), այլ նաև հարթավայրերում: Արդեն նրա 1734 թ. հրովարտակով Արցախի Դովշանլու գյուղի ավագերեց Դավիթը հաստատվում է ինչպես այդ, այնպես էլ Խաչենի մի քանի այլ գյուղերի ավագի ու մելիքի պաշտոնում: «Կարգադրությանը չպետք է հակառակվեն,- հրահանգվում էր փաստաթղթում,- և այն ընդունելով որպես խիստ կարգադրություն՝ ջանք չխնայեն նրա կատարման հարցում: Թող այն իրենց պարտականությունը համարեն»[17]:

Մեկ այլ հրովարտակով Նադիրը Գեղարքունիքի մելիք Մելիքջան Մելիք-Շահնազարյանի որդուն՝ Մանուչարին «ետ նմա իշխանութիւն, ունել ընդ ինքեան զդահլիճ..., և անուանեաց զնա միրիմիրան կամ պէյլէրպէյի ի վերայ Արարատեան երկրի և մասին ինչ Սիւնեաց»: [18] 1738 թ. շահական հատուկ հրամանագրով մուաֆության իրավունքներ շնորվեցին Երևանի մելիքներ Հակոբջանին ու Մկրտումին՝ «Նմանների մեջ լավագույն խնդրարկուների բարի ծառայության համար այնպես, ինչպես նախկինում արքայական հրամանագրով հաստատվել էր նրանց մելիքության *մուաֆությունն* ու մյուս [իրավունքները], ըստ կարգի...»[19]:

Բազմաթիվ հայ մելիքներ պարսիկների հետ դաշնակցած պայքարում են ընդհանուր թշնամու՝ օսմանցիների դեմ: Այդ պայքարում փաստական ինքնավարություն են ձեռք բերում հատկապես Արցախի մելիքները, Դիզակի մելիք Եգանի գլխավորությամբ, որոնց զինական ուժերի հետ Նադիրի գործակցությունը բարձրանում է նոր աստիճանի: Արցախում՝ Գանձակի նախկին բեկլարբեկությանը ենթակա Վարանդայի, Դիզակի, Զրաբերդի, Խաչենի և Գյուլիստանի գավառներում 1736 թ. ծնունդ է առնում հայկական նոր ինքնավարություն՝ Խամսայի (արաբերեն խամսա՝ հինգ) մելիքությունները: Նադիրը, խիստ կարևորելով հայության դերը հակաթուրքական պայքարում, չի հապաղում ճանաչել Արցախյան այս յուրահատուկ պետականությունը: Նա փաստորեն վավերացնում է հայերի շուրջ 15-ամյա հերոսական պայքարի արդյունքում ստեղծված իրողությունը[20]:

---

[17] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 2բ, վավերագիր 182, բնագիրն Ք. Կոստիկյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ, պրակ IV, Երևան, 2005, վավ. 2:

[18] Մելիք-Սիլիմեանց Հ. Զմիւռնիացի, Համառոտութիւն պատմութեան Հայկազեանց, Մատենադարան, ձեռագիր 2888, էջ 341ա, հմմտ.՝ Հայոց պատմություն, ՀՀ ԳԱԱ հրատ., հ. 3, գիրք առաջին, Եր., 2010, էջ 55:

[19] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1զ, վավ., 1032:

[20] Տե՛ս Հայոց պատմություն, ՀՀ ԳԱԱ հրատ., հ. 3, գիրք առաջին, էջ 64-65:

Այսպիսով, Արցախում պետականության յուրօրինակ դրսևորումներ եղան հայկական սղնախներն ու մելիքությունները: Պատահական չէ, որ Արցախի դերը խիստ կարևորվեց XVIII դ. երկրորդ կեսին առաջ քաշված ազատագրական ծրագրերում:

XVIII դ. երկրորդ կեսը և XIX դ. առաջին կեսը Հայաստանի ազատագրության նոր ծրագրերի մշակման և մասնակի գործադրման փուլն էր: Այն սկսվում է հնդկահայ նշանավոր գործիչ Հովսեփ Էմինի բուռն գործունեությամբ[21] 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմը և 1783 թ. ռուս-վրացական Գեորգևսկի դաշնագրով Վրաստանի ռուսական հովանավորության ընդունումը նոր խթան հանդիսացան ավելի բովանդակալից ազատագրական ծրագրերի մշակման համար: 1769 թ. աստրախանաբնակ հայ գործիչ Մովսես Սարաֆյանի կազմված ծրագրերում նախատեսվում էր հայոց թագավորության վերականգնում Ռուսաստանի օժանդակությամբ: Պետականության վերակերտման գործում կարևորություն էր տրվում Հայաստանի այն շրջանների փորձին, որոնք ժամանակ առ ժամանակ եղել էին ինքնավար կազմավորումներ և հայ ժողովրդի կողմից ընկալվել են որպես ընդօրինակության արժանի և թագավորության վերականգնման առավել հնարավոր տարածաշրջաններ: Մասնավորապես, մատնանշվում էին Արցախն ու Սյունիքը: Պատահական չէ, որ ապագա Հայոց թագավորների թեկնածուների շարքում Մ. Սարաֆյանը տեսնում էր Արցախի մելիքներից մեկին: Ակնհայտ է, որ 1722-1747 թթ. Արցախում պետականության վերականգնման իրողությունը և մելիքությունների շառավիղները հստակ կնիք էին դրել ազատագրական պայքարի ղեկավարների նմանատիպ մտածողության վրա:

Ուշագրավ է, որ այդ ժամանակ մելիքները ևս գիտակցում էին թագավորության վերականգնման գործում իրենց առաքելությունը, չէին մոռանում իրենց հայոց արքայական ծագումն ու առիթ առ առիթ այդ մասին հիշատակում էին պաշտոնական գրագրություններում: Այսպես. 1781 թ. սեպտեմբերի 2-ին ռուս մեծ զորավար Ալեքսանդր Սուվորովին և Եկատերինա II կայսրուհուն հասցեագրած հերթական նամակներում, որտեղ խնդրում էին զինական օգնություն մահմեդականների դեմ անհավասար պայքարում, Արցախի մելիքները (Ադամ, Բեգլար, Իսրայել) իրենց մասին գրում էին. «Մեք ներքոյ անվանեալքս Ղարաբաղու հայոց թագաւորաց ազնիւ զինվորած(ց) մնացեալ ժառանգք մելիքներըս», «մեք ի ազգաց հայոց ի տանիցն Արշակունեաց և Աւղանից ի արքունական գահոյից, մնացեալ ազնիւ

[21] Հովսեփ Էմինի ազատագրական գործունեության և ծրագրերի մասին մանրամասն տե՛ս Иоаннисян А.Р., Иосиф Эмин, Ер., 1945.

զինաւորացէն ժառանգ մէլիքներս և մեր բոլուր երկիրս իշխանօվք հանդերձ...»[22]:

Հայոց պետականաշինության գաղափարական տեսլականը նոր բարձրության են հասցնում հնդկահայ նշանավոր գործիչներ Շահամիր Շահամիրյանը և Մովսես Բաղրամյանը: Մադրասում 1771 թ. նրանց հիմնադրած տպարանում շուտով լույս են տեսնում Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» և Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատությունները, որոնցում անդրադարձ էր կատարվում հայ ժողովրդի ծանր վիճակին և միապետության փոխարեն, առաջարկվում էր ստեղծել ժողովրդավար պետություն, որն ըստ հեղինակների՝ հայոց պետականության կործանման գլխավոր պատճառներից է եղել: Ի տարբերություն նախորդ բոլոր ծրագրերի Շահամիրյանի նախագիծը, որը հայտնի է «Հարավային ծրագիր» անունով, առաջ էր քաշում տվյալ ժամանակաշրջանի համար արտառոց՝ ընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա ձևավորված հանրապետական Հայաստան ստեղծելու գաղափարը: Ապագա Հայաստանում ամենինչից վեր լինելու էր ոչ թե միապետի կամքը, այլ օրենքը: Ըստ «Որոգայթ փառաց»՝ անհրաժեշտ է «կալ և մնալ ձեզ կախեալ ըստ օրինաց ձերոց զի՛ չ ոք իցէ՛ որ իշխեսցէ ի վերայ ձեր բայց օրէնս ձեր»[23]:

Ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը, անդրադառնալով XVIII դարի երկրորդ կեսի ազատագրական ծրագրերին, ընդգծում է, որ «Առավել էականն ու հատկանշականն այն է, որ ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանի և Հնդկաստանի գաղութներում երկիրն ազատագրելու հետմեկտեղ միահամուռ ուաներեր խնդիր էր դրվում վերականգնելու հայկական անկախ պետականությունը»[24]:

XIX դ. առաջին երեսնամյակին գրավելով Արևելյան Հայաստանը՝ ռուսական արքունիքը փորձեց Անդրկովկասում մտցնել կայսերական վարչակարգեր: Ուստիև առժամանակ տեղական ինքնակառավարման առանձին տարրեր, որոնք կային պարսկական ազդեցության շրջանում, պահպանվեցին: Բայց միաժամանակ վերացվեցին ներքին ինքնավարության դրսևորումներ հանդիսացող մելիքությունները, որոնց թվում և Արցախի մելիքությունների շառավիղները:

---

[22] Армяно-русские отношения в XVIII веке (1760-1800 гг.), сборник документов, т. IV, Ер., 1990, էջ 179, 181: Ի դեպ, այդ նամակների ռուսերեն թարգմանություններում մելիքների հայոց արքաներից սերված լինելու մասին հատվածը հանված է, իսկ «թագավոր», բառը փոխարինված «начальник» բառով (նույն տեղում, էջ 180, 183-184): Արցախում ազգային ազատագրության և պետականության համար պայքարի մասին տե՛ս նաև Բալայան Վ., Արցախահայ ազատագրական պայքարի բովանդակությունը 17-րդ դ. երկրորդ կեսից մինչև 1813 թ., Ստեփանակերտ, 2013 և նույնի՝ Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, (1813-2007 թթ.), Ստեփանակերտ, 2012:

[23] Գիրք անուանեալ Որոգայթ փառաց, Մադրաս, 1773, էջ 15-16:

[24] Հայոց պատմություն, ՀՀ ԳԱԱ հրատ., հ. III, գիրք առաջին, էջ 178:

XIX դ. երկրորդ կեսից սկսվում է մի ժամանակաշրջան, երբ Արևելյան Հայաստանում ռուսական վարչակարգերի վերջնական հաստատումից հետո, ինքնիշխանության գրեթե բոլոր սաղմերը վերանում են, իսկ Արևմտյան Հայաստանում, բացառությամբ Սասունի, Կիլիկիայում՝ Զեյթունի, պայմանավորված հայ ժողովրդի համար ստեղծված քաղաքական ծանրագույն պայմաններով, պետականության վերականգնման համար պայքարը փոխարինվում է Օսմանյան կայսրության կազմում ընդամենը հայկական ինքնավարության հասնելու տեսլականով:

1918 թ. մայիսի 28-ով սկսվող **Հայաստանի Հանրապետության (1918-1920) պատմությանփուլը** նշանավորվում է ոչ միայն անկախության վերականգնումով, այլ նաև իր վարչական կառուցվածքով ժողովրդավարական՝ խորհրդարանական հանրապետության ստեղծումով[25]: Ընդամենը երկուսուկես տարիների ընթացքում Առաջին հանրապետությունը ձեռք է բերում անկախ պետականությանը բնորոշ բոլոր հատկանիշները՝ տարածք, իշխանության մարմիններ, բանակ, միջազգային ճանաչում և այլն:

Նորագույն ժամանակաշրջանում Արցախը և ապանաև Սյունիքը, արտաքին գործոնների պատճառով հնարավորություն չունենալով միանալ Հայաստանի Հանրապետությանը, ստեղծեցին սեփական պետական կազմավորումները և պայքար ծավալեցին Մայր հայրենիքին միանալու համար: 1918 թ. հուլիսի 22-ին Շուշիում հրավիրվում է Արցախահայության առաջին համագումարը, որը կազմում է Ղարաբաղի ժողովրդական կառավարությունն և երկրամասը հռչակում անկախ վարչատարածքային միավոր: Հետագա համագումարներում Արցախի հայությունն իր որոշումներով կրկնում է Հայաստանի Հանրապետությանը միանալու իր վճռականությունը: Ադրբեջանի ոտնձգությունների դեմ մղած համառ ու արյունալի պայքարից հետո Արցախահայության 9-րդ համագումարը 1920 թ. ապրիլի 25-ին երկրամասը հռչակում է ՀՀ մաս: Այդ երկու տարիների ընթացքում Արցախը դառնում է հայոց նորագույն պետականության կերտման գլխավոր կենտրոններից մեկը[26]:

Քեմալ աբոլշևիկյան գործակցության արդյունքում 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության անկումից հետո անկախության դրոշը շարունակում է ծածանել նույն ամսի 25-ին

---

[25]Տե՛ս Richard G. Hovannisian, The Republic of Armenia, vol. I-IV, Berkeley, Los Angeles, London, 1971-1996, Հակոբյան Արարատ, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Եր., 2005:

[26]Մանրամասն տե՛ս Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Եր., 1996, Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք 1, 1917-1923, Ե., 2003, և այլն:

Գարեգին Նժդեհի ղեկավարությամբ Տաթևի համազանգեզուրյան առաջին համագումարում հռչակված Ինքնավար Սյունիքը, որը 1921 թ. ապրիլի 27-ին վերանվանվում է Լեռնահայաստանի, իսկ հունիսի 1-ին՝ Հայաստանի Հանրապետության: Սյունիքը դառնում է ամբողջ անդրկովկասյան տարածաշրջանում վերջին անկախ պետական կազմավորումը[27]:

Խորհրդային Հայաստանը (մինչև 1936 թ. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունն՝ ՀՍԽՀ) քանի որ ուներ պետությանը բնորոշ հատկանիշների մեծ մասը, անշուշտ նույնպես պետականություն էր, առավել ևս, որ իր գոյության առաջին տարիներին ուներ հարաբերական անկախ կարգավիճակ:

Միաժամանակ չի կարելի մոռանալ, որ նույն՝ հարաբարական անկախության ենթափուլում, օգտվելով Հայաստանի համար ստեղծված արտաքին ու ներքին անբարենպաստ պայմաններից, հայկական մի շարք տարածքներ (Նախիջևան, Լեռնային Ղարաբաղ, Ուտիք, Կարսի մարզ, Սուրմալուի գավառ և այլն) դուրս մնացին ՀՍԽՀ սահմաններից: Դրանցից գոնե Լեռնային Ղարաբաղին Ադրբեջանի կազմում տրվեց ինքնավար մարզային կարգավիճակ 1923 թ. հուլիսի 7-ին, երբ կազմավորվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը (ԼՂԻՄ): Վերջինս թեև զրկված էր ինքնավարության շատ տարրերից, այնուամենայնիվ իր սահմանափակ ինքնավարության շնորհիվ կարողացավ դիմակայել Ադրբեջանի ազգայնամոլ քաղաքականությանը և մինչև 1988 թ. Արցախյան շարժումը պահպանել երկրամասի ընդհանուր հայկական դիմագիծը:

Նորագույն ժամանակաշրջանում Հայոց պետականության երրորդ՝ անկախության փուլը սկսվում է 1991 թ. սեպտեմբերից, երբ ամսի 2-ին կյանքի է կոչվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (Արցախի Հանրապետություն), իսկ 21-ին անցկացված համաժողովրդական հանրաքվեից հետո՝ Հայաստանի Հանրապետությունը: Այս գործընթացի հիմքերը փաստորեն դրվեցին Արցախյան ազատագրական հուժկու շարժումով, 1990 թ. մայիսին կայացած բազմակուսակցական, ժողովրդավարական ընտրություններով և նորընտիր Գերագույն խորհրդի (հետագայում՝ Ազգային ժողով) կողմից օգոստոսի 23-ին ընդունած «Անկախության հռչակագրով»:

Ներկայումս հայկական երկու պետությունները՝ ՀՀ-ն և ԱՀ-ն, բոլորելով իրենց վերանկախացման երեսնամյակը,

[27] Տե՛ս Սիմոնյան Արամ, Զանգեզուրի գոյապայքարը 1917-1920 թթ., Եր., 2017:

աշխարհաքաղաքական ծանրության պայմաններում իսկ, շարունակում են հայոց հինգհազարամյա պետականության երթը:

Այսպիսով՝ հայոց պետականության ուրվագծային պատմության վերոհիշյալ շարադրանքը հուշում է, որ անհրաժեշտ է վերանայել հայ պատմագրության մեջ գոյություն ունեցած այն թյուր տեսակետը, որ դարեր շարունակ հայ ժողովուրդը եղել է պետականազուրկ: Անտարակույս, ժամանակ առ ժամանակ կործանվել է միայն միասնական թագավորությունը, իսկ պետական ինքնատիպ դրսևորումները՝ տեղական թագավորությունները, իշխանապետությունները, մելիքությունները և այլ կազմավորումները գրեթե բոլոր պատմափուլերում եղել են և դրանով իսկ պահպանել հայ կական պետականության ընդհանուր շղթան: Այդ շղթայում, ինչպես երևաց, Արցախը մշտապես ունեցել է իր ծանրակշիռ տեղն ու դերը:

ASHOT MELKONYAN
Director of the Institute of History (IH),
Academician NAS RA
ashamelk@yahoo.com

ARTSAKH IN THE CONTEXT OF HISTORY OF THE ARMENIAN STATEHOOD

SUMMARY

Keywords: kingdom, Nagorno-Karabakh Republic, liberation struggle, Armenian people, state system, Artsakh, Eastern Armenia.

The Armenian statehood often appeared in different forms in the Armenian highlands at geographically favorable conditions (dictatorship, semi-independent community, etc.). It is noteworthy that many state formations of local significance have often been the basis for the formation of pan-Armenian states. In the form of a united, inter-state kingdom like within Van, as well as later within Yervand, Artashesyan and Arshakuni kingdoms, separate provinces continued to maintain sovereign status or at least have played a more important role in the life of the whole country because of their influential position. As a rule, these were the great constitutional authorities, the marchlands (Syunik, Gugark, Aghdznik, and others) or geographically-favored regions (Artsakh, Tayk, Moxs, Tavush, and others). Particularly, Artsakh has played a special role among them.

Thanks to the liberation struggle of the Armenian people during the Vardanants and Vahanants wars, starting from the 480s the Armenian state system was restored autonomously in the central part of Eastern Armenia - in the Ararat land, as well as in the eastern part of Armenia - in Artsakh under the leadership of Vachagan Barepasht.

In subsequent centuries, Arshakahiks continued their tradition of preservation of patriotism by the Hassan-Jalalians and other tribal noble houses in Artsakh. In the middle Ages, the Armenian fortresses and principalities were unique manifestations of statehood in Artsakh. There is no coincidence that the role of Artsakh was very

important in the liberation programs that were introduced in the second half of the 18th century.

Artsakh has been actively involved in the liberation struggle of the Armenian people in the new era. A modern state system was established in Artsakh in 1918-1920, which declared itself a part of the Republic of Armenia by the decision of the 9th congress of Artsakh Armenians on April 25, 1920. In the Soviet era, under Bolshevik's non-pro-Armenian policy, Artsakh has managed to maintain certain elements of its state system with the status of NKAR, formed on July 7, 1923, and to implement the Nagorno-Karabakh Republic on September 2, 1991.

АШОТ МЕЛКОНЯН
Директор Института истории (ИИ),
академик НАН РА
ashamelk@yahoo.com

АРЦАХ В КОНТЕКСТЕ ИСТОРИИ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ

РЕЗЮМЕ

Ключевые слова: Царство, Нагорно-карабахская Республика, национально-освободительное движение, армянское население, государственность, Арцах, Восточная Армения.

На территории Армянского нагорья в период отсутствия общеармянского царства армянская государственность имела и иные проявления (княжества, полунезависимые общины и т.д.). В этом плане в течение многих столетий выделялась историческая область Арцах.

После освободительных войн в начале 480-х годов армянская государственность была восстановлена в восточных регионах Армении, в частности, в Арцахе во главе с царем Вачаганом Барепаштом (Благочестивый).

В последующие века в Арцахе Араншахики, Допяны, Гасан-Джалаляны продолжили традиции государственных институтов. В позднем средневековье своеобразными проявлениями государственности в Арцахе стали армянские сигнахи и меликства. Не случайно, что значение Арцаха подчеркивалось в освободительных программах второй половины XVIII века.

Одним из первых регионов, восстановивших армянскую государственность в новое время, снова был Арцах в 1918-1920 годах. Даже в советские годы в условиях дискриминационной политики азербайджанских властей в отношении армянского населения, армяне Арцаха сумели сохранить статус государственности в составе Аз. ССР в качестве Нагорно-Карабахской Автономной Области, а 2 сентября 1991 года в результате мощного национально-освободительного движения провозгласить независимость Нагорно-карабахской (Арцахской) Республики.